ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐԻ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ԺԹ. 00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Արսեն Բաղդասարի Լոքյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ասյա Սուրենի Բերբերյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Զարզանդ Դավթի Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ.-ի հունվարի 19-ին՝ ժամը 15^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52 ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2023թ. դեկտեմբերի 11-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին հոգեբանական և ռազմական գիտությունների բնագավառներում շահեկանորեն աճել են զինվորական անձնակազմին մարտական ակտիվության մղող հոգեբանական գործոնների դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ գիտական հետաքրքրությունները: Սպառազինության և ռազմական տեխնիկայի, այդ թվում գերճշգրիտ զենքի, զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի, պատերազմավարման նոր եղանակների և միջոցների ստեղծումն ու զարգացումը ժամանակակից պատերազմները դարձրել են արագընթաց և դինամիկ, էականորեն կրճատել են մարտական խնդիրների կատարման և որոշումների ընդունման ժամանակը, հանգեցրել են զինվորականի գործունեության վերաիմաստավորմանը, մարտական, այդ թվում հոգեբանական պատրաստման նոր ծրագրերի մշակման անհրաժեշտությանը: Զինծառայողների, ժամանակակից պատերազմների պահանջներին համապատասխան, պատրաստության մակարդակը հնարավորություն կտա լարված պայմաններում մոբիլիզացված ֆիզիկական, մտավոր և հոգեկան ռեսուրսներն օգտագործել և իրավիճակին համապատասխան վարք ցուցաբերել: Այսօր, առավել քան երբևէ, կապված 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի և 2022թ. սեպտեմբերյան մարտական գործողությունների հետ՝ զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների ուսումնասիրությունները խիստ հրատապ են և բառացիորեն միտված են մարտական իրադրությունում հոգեբանական կայունության պահպանմանը՝ հնարավորություն տալով ընդլայնել զինծառայողի մարտական հնարավորությունները:

Հարկ է նշել, որ մարտական գործողությունների պայմաններում ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի բարձր մարտական ակտիվություն ցուցաբերելու համար անհրաժեշտ հոգեբանական գործոնների վերաբերյալ ուսումնասիրությունները չունեն համակարգային բնույթ: Մարտիկի, հրամանատարի հոգեբանական կայունության ձևավորման վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ կատարել են Պ. Մոկորը, Է. Բորինգան, Է. Դինտեր, Պ. Լայնբարջերը, Յա. Ագրելլին, Լ. Լայմբերգին, Մ. Ռեշյոտնիկովը, Ա. Ստեպանովը, Մ. Զելենկովը, Վ. Վարվարով, Տ. Ռոգաչևան, Ռ. Աբդուրախմանովը, Մ. Կորոբեյնիկովը, Մ. Զենչենկոն, Լ.

Արտիշևը, Ն. Գոլովինը, Պ. Ագապեևը և ուրիշները, զինծառայողին մարտական ակտիվության մղող գործոնների վերաբերյալ՝ Ա. Կարայանին, Վ. Սիրոմյատնիկովը և Պ. Կորչյոմնին: Հայ հոգեբանների կողմից տարբեր իրավիճակներում անձի հոգեբանական գործոնների դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրություններն իրականացվել են Հ. Ավանեսյանի, Ա. Լոքյանի, Վ. Մարգարյանի, Մ. Մկրտումյանի, Կ. Վարդանյանի, Ն. Հակոբյանի, Ռ. Աղուզումցյանի, Ձ. Ասատրյանի կողմից:

Հետազոտության օբյեկտն է զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները:

Հետազոտության առարկան է զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների դրսևորման առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը: Բացահայտել զինվորական անձնակազմի մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող հոգեբանական գործոնները, որոնք կարող են խթանել կամ խոչընդոտել մարտական խնդրի հաջող կատարմանը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ զինծառայողի մարտական ակտիվության աստիճանը ենթակա է փոփոխման, այն ուղիղ համեմատականորեն պայմանավորված է զինծառայողների հուզական ինտելեկտի մակարդակով և ագրեսիվության դրսևորմամբ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. բացահայտել զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող հոգեբանական գործոնները,

2. բացահայտել 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից և մասնակցություն չունեցած զինծառայողների հոգեբանական գործոնների համահարաբերակցային առանձնահատկությունները,

3. վեր հանել «մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների կիրառման առանձնահատկությունները և իմաստային տարբերակվածությունը,

4. ուսումնասիրել զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների վերաբերյալ մոտեցումները,

5. ուսումնասիրել զինվորական անձնակազմի հոգեբանական կայունության ձևավորմանն ուղղված ժամանակակից մոտեցումները,

6. մշակել հոգեբանական պատրաստմանն ուղղված նոր մեթոդաբանություն:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտության մասնակիցների ընդհանուր թիվը 415 է, որոնք բաժանված էին 2 խմբի՝ փորձարարական (n=164) և ստուգիչ (n=161). 1) ժամկետային կազմ (փորձարարական, n=30 և ստուգիչ, n=30 խմբեր), 2) շարքային կազմ փորձարարական, n=29 և ստուգիչ, n=28 խմբեր), 3) ենթասպայական կազմ (փորձարարական, n=27 և ստուգիչ, n=27 խմբեր), 4) կրտսեր սպայական կազմ (փորձարարական, n=28 և ստուգիչ, n=28 խմբեր), 5) ավագ սպայական կազմ (փորձարարական n=50 և ստուգիչ, n=48 խմբեր): Վարկածը հաստատելու համար առանձնացվել է լրացուցիչ փորձարարական խումբ (n=90), 6) վաշտի, դասակի, ջոկի, գումարտակի, զորամասի հրամանատարներ (փորձարարական խումբ, n=30), 7) մարտի պայմաններում աչքի ընկած զինծառայողներ (փորձարարական խումբ, n=30), 8) 2022 թ. սեպտեմբերյան մարտական գործողություններին մասնակից զինծառայողներ (փորձարարական խումբ, n=30):

Հետազոտության տեսամեթոդական հիմք են ծառայել արտացոլման սկզբունքը, դետերմինիզմի սկզբունքը (Հ. Հելմհոլց, Ֆ. Դոնդերս, Ի. Սեչենով և ուրիշներ), կոնկրետ պատմական մոտեցումը (Լ. Վիգոտսկի), համակողմանի ուսումնասիրության սկզբունքը (Ն. Ժուրավլյովա), համակարգային մոտեցումը (Ա. Անանև, Լ. Ռուբինշտեյն, Բ. Լոմով): Տեսական և հայեցակարգային մոտեցումները՝ մարտական իրադրությունում զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող գործոնների վերաբերյալ (Ա. Կարայանի, Ի. Սիրոմյատնիկով, Պ. Կորչյոմնի), մարտի սթրես-գործոնների հետևանքով զինծառայողներ հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների և վարքի փոփոխությունների վերաբերյալ դիտարկումները (Մ. Կորոբեյնիկով, Ն. Գոլովինը, Պ. Մոկոր, Ռ. Լազարուս, Լ. Կիտաև-Սմիկ):

Հետազոտության մեթոդներն են՝

- **փորձագիտական հարցում** - զինծառայողների մարտական ակտիվության վրա ազդող գործոնները պարզելու նպատակով իրականացվել է համապատասխան ոլորտների մասնագետների հետ կարծիքների քննարկում:
- **Կոնտենտ վերլուծություն** - զինծառայողների մարտական ակտիվության աստիճանի վրա (մեծ, միջին, ցածր) ազդեցություն ունեցող

գործոնները բնութագրող բառերի և արտահայտությունների, զուգորդությունների վերլուծություն:

- **Թեստավորում** - օգտագործվել են հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները. 1. Հուզական ինտելեկտի ախտորոշման հարցարան (Ն. Հոլ) (հայերեն), 2. Ագրեսիվության ախտորոշման հարցաշար (BPAQ) (Բասս-Պերի) (հայերեն), 3. Տագնապայնության ախտորոշման մեթոդիկա (Սպիլբերգեր-Խանին) (հայերեն), 4. Սթրեսում նյարդահոգեկան կայունության և դեզադապտացիայի ռիսկի ախտորոշման թեստ (Ա. Մակլակով) (հայերեն), 5. Ռիսկի դիմելու պատրաստակամության հարցարան (PSK) (Շուբերտ) (ռուսերեն), 6. Սթրեսակայունության ինքնագնահատման թեստ (Ն.Վ. Կիրիշևա, Ն.Վ. Ռյաբչիկովա) (ռուսերեն):
- **Զրույցի մեթոդ** - աշխատանքում, ի սկզբանե, զրույցի մեթոդի կիրառման նպատակ չի դրվել, սակայն թիրախային խմբում թեստավորում անցկացնելու ընթացքում, զրույցի և հարցման մեթոդներով պարզվել է, որ շարքային և ենթասպայական կազմի զինծառայողների զգալի շրջանում կրթական մակարդակը եղել է ավելի ցածր (հիմնական ընդհանուր և միջնակարգ), քան ժամկետայիններինը,

Հենվելով տվյալների թույլատրելի տատանման հաշվումների արդյունքների վրա՝ հետազոտության արդյունքների քանակական վերլուծությունը կատարվել է համակարգչային Excell-2010 և SPSS-26 վիճակագրական ծրագրերի միջոցով:

Հետազոտության գիտական նորույթը.

- բացահայտվել է, որ 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի մակարդակի բարձրացումը պայմանավորված է պատերազմի սթրես-գործոնների անմիջական ազդեցությամբ,
- բացահայտվել է, որ 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների ագրեսիվության միջին արտահայտվածությունը պայմանավորված է պատերազմի սթրես-գործոնների անմիջական ազդեցությամբ,
- բացահայտվել է, որ մարտական գործողություններին մասնակցություն չունեցած զինծառայողների ագրեսիվության բարձր մակարդակը պայմանավորված է պատերազմին մասնակցություն չունենալու հանգամանքով:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

1. մարտական իրադրությունում զինծառայողների մարտական ակտիվության մակարդակը կախված է նրանց հուզական ինտելեկտի մակարդակով և ագրեսիվության դրսևորմամբ,

2. զինվորական անձնակազմի մարտական ակտիվության ցուցաբերումը կրում է իրավիճակային բնույթ, թեև նկատելի են որոշակի օրինաչափություններ,

3. մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի մակարդակը պայմանավորված է պատերազմի սթրես-գործոնների ազդեցությամբ,

4. մարտական գործողություններին մասնակցություն չունեցած զինծառայողների ագրեսիվության մակարդակը պայմանավորված է մարտական գործողություններին մասնակից չլինելու հանգամանքով,

5. հուզական ինտելեկտի բոլոր բաղադրիչները փոխկապված են ագրեսիվության, սթրեսակայունության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության և ռիսկի գնալու պատրաստակամության գործոնների հետ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են որոշակիացնել ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների վերաբերյալ տեսական պատկերացումները, կարող են ընդլայնել զինծառայողների հոգեբանական վիճակի փոփոխությունների մասին պատկերացումների շրջանակը, որը կարող է հիմք հանդիսանալ հոգեբանական պատրաստմանն ուղղված միջոցառումների կազմակերպման համար:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան կատարելագործելու մարտական պատրաստման գործընթացում հոգեբանական պատրաստմանն ուղղված մեթոդաբանությունը: Այս արդյունքները կարող են մեթոդական ուղեցույց հանդիսանալ մարտական պատրաստման համար, ինչպես նաև որոշարկել զինծառայողների հետ հոգեթերապևտիկ աշխատանքների կազմակերպման ուղղությունը:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունն իրականացվել է 4 փուլով:

1-ին փուլում կատարվել են գրականության տեսական վերլուծություն, հետազոտության առարկայի և օբյեկտի, հետազոտության խնդիրների, մեթոդաբանական հիմքերի որոշակիացում: Ընտրվել է թիրախային խումբը, մեթոդներն ու մեթոդիկաները:

2-րդ փուլում իրականացվել է փորձագիտական հարցում, որի հիման վրա կատարվել է քանակական և որակական կոնտենտ վերլուծություն՝

պարզելու զինծառայողների մարտական ակտիվության վրա ազդող գործոնները:

3-րդ փուլում կատարվել է հոգեբանական թեստավորում, որն ուղղված էր բացահայտելու նրանց հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության, սթրեսակայունության և ռիսկի դիմելու պատրաստակամության աստիճանը:

4-րդ փուլում իրականացվել է հիմնարար փորձարարական հետազոտություն, ստացված արդյունքների հիման վրա կատարվել են գիտական եզրակացություններ և առաջարկվել են դրույթներ, մշակվել են գործնական առաջարկներ:

Հետազոտության փորձաքննությունը: Ատենախոսական աշխատանքի տեսական դրույթները և հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի նիստերում, գիտաժողովներում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում կազմակերպված «Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները» խորագրով միջազգային գիտաժողովին (Երևան, 2022), ԵՊՀ-ում կազմակերպված «Տեսական և կիրառական հոգեբանության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովին (Երևան, 2023): Զեկույցներ են ներկայացվել ՀՀ ՊՆ-ում և ՊԱՀՀ-ում կազմակերպված գիտաժողովներում, հավաք-խորհրդակցություններում: Հետազոտական աշխատանքի վերաբերյալ ՀՀ ԲՈԿ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում հրատարակվել է 8 հոդված:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը համակարգչային շարվածքով 145 տպագիր էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության ընտրակազմը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Զինվորական անձնակազմին մարտական ակտիվության մղող հոգեբանական գործոնների հիմնախնդիրը՝ հոգեբանական գիտական գրականության մեջ» գլխի 1.1՝ «Զինվորականի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները»** ենթագլխում ներկայացված են զինվորականի գործունեության տեսակները, գործունեության յուրաքանչյուր փուլում հուզական ծանրաբեռնվածությունների ինտենսիվությունը, մարտական և հոգեբանական պատրաստման տեսակները, հոգեբանական պատրաստման մակարդակները և փուլերը:

Ատենախոսության **1.2՝ ««Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների կիրառման առանձնահատկությունները և իմաստային տարբերակվածությունը»** ենթագլխում քննարկված են հայրենական ռազմագիտական տերմինաբանության մեջ «մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների իմաստային տարբերակվածության կարևորությունը, ռազմական, հոգեբանական և փիլիսոփայական ոլորտի մասնագետների դիտարկումներն այս եզրույթների տարանջատման և ճիշտ կիրառման մասին: Ներկայացված է «մարտական ակտիվության» վերաբերյալ մեր կողմից առավել ընդունված մեկնաբանությունը:

Ատենախոսության **1.3՝ «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների վերաբերյալ տարբեր մոտեցումները»** ենթագլխում քննարկված են արտակարգ իրավիճակներում անձին ակտիվության մղող հոգեբանական գործոնների վերաբերյալ գիտական մոտեցումներն ու դրանց դրսևորման առանձնահատկությունները: Ներկայացված են զինծառայողներին մարտական ակտիվության մղող գործոնների տեսակները (արտաքին և ներքին) և դրանց ազդեցության աստիճանը:

Ատենախոսության **1.4՝ «Զինվորական անձնակազմի հոգեբանական կայունությանն ուղղված ժամանակակից մոտեցումները»** ենթագլխում քննարկված են որոշ պետությունների ՀՈՒ-ում մարտական պատրաստման, այդ թվում հոգեբանական պատրաստմանն ուղղված ժամանակակից ծրագրերը, որոնք կարող են օրինակ հանդիսանալ որոշ մոտեցումներ փոփոխելու հարցում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Զինծառայողների մարտական ակտիվության աստիճանի վրա ազդող հոգեբանական գործոնների հետազոտության արդյունքների վերլուծություն» գլխի 2.1՝ «Հետազոտության ուղղվածության հիմնավորում. հետազոտության մեթոդների համակազմը, ընտրանքը»** ենթագլխում ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդները ու ներգրավված ընտրակազմի հիմնավորումը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված քանակական և որակական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունը:

Ատենախոսական աշխատանքի **2.2՝ «Փորձագիտական գնահատականների և կոնտենտ վերլուծության մեթոդների կիրառմամբ ստացված տվյալները»** խորագրով ենթագլխում մանրամասն ներկայացված է փորձագետների հետ անցկացված խորքային հարցազրույցների արդյունքները: Քննարկված է կոնտենտ վերլուծության արդյունքները, որի նպատակն էր վեր հանել ՀՀ ՀՈՒ-ի զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները: Վերլուծությամբ ստացված արդյունքները ցույց են տվել, որ մարտական գործողությունների պայմաններում, զինծառայողի մարտական ակտիվության աստիճանի վրա **մեծ ազդեցություն** ունեն մարտական պատրաստականությունը (որի կարևորագույն բաղկացուցիչներն են մարտական, բարոյահոգեբանական ու ֆիզիկական պատրաստությունները), անձնային որակները, հոգեֆիզիոլոգիական վիճակը, փոխվստահությունն և փոխգործությունը:

Ատենախոսական աշխատանքի **2.3՝ «Զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հետազոտում. հետազոտական տվյալների բազա»** ենթագլխում ներկայացված է իրականացված հետազոտության արդյունքում ստացված

քանակական տվյալները, վեր է հանվել հետազոտական խմբերի միջին ցուցանիշները և ստանդարտ շեղումները, որտեղ ակնհայտ տարբերություններ բացահայտվել են հուզական ինտելեկտի և ագրեսիվության ցուցանիշների միջև:

Ատենախոսության երրորդ՝ «**Զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող հոգեբանական գործոնների միջին ցուցանիշների վերլուծություն. համահարաբերակցային վերլուծություն**» **գլխի 3.1՝** «**Հոգեբանական գործոնների միջին ցուցանիշների վերլուծություն**» ենթագլխում առանձին վերլուծվել է մարտական գործողություններին մասնակից և մասնակցություն չունեցած զինծառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության, ռիսկի գնալու պատրաստակամության և սթրեսակայունության միջին ցուցանիշների արդյունքները: Հետազոտական խմբերում ակնհայտ տարբեր են հուզական ինտելեկտի արտահայտվածության աստիճանները, որոնք ներկայացված են գծապատկերում.



Գծապատկեր 1. Մարտական գործողություններին մասնակից և մասնակցություն չունեցած զինծառայողների հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշների արտահայտվածության աստիճանները

Մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտն ավելի բարձր է, քան մասնակցություն չունեցածներինը: Ամենահավանական պատճառն այն է, որ հուզական ինտելեկտը բարձր է եղել և դրսևորվել է մարտի պայմաններում կամ բարձրացել է մարտի սթրես-գործոններին դիմակայելու արդյունքում:

Մեկնաբանման են արժանի հետազոտական խնբերում ագրեսիվության ցուցանիշները:



Գծապատկեր 2. Ագրեսիվության ախտորոշման մեթոդիկայի համեմատական տվյալները հետազոտական խմբերում

Մարտական գործողություններին մասնակցություն չունեցած ժամկետային զինծառայողների շրջանում բարձր է թշնամանքի ագրեսիան (M=6, StDev=2.1), շարքային և ենթասպայական կազմերի շրջանում բարձր է ֆիզիկական ագրեսիան (M=6, StDev=1.4 M=5, StDev=1.9), իսկ մասնակիցների շրջանում ագրեսիվության արտահայտվածությունը նորմայի մակարդակում է: Կարելի է ենթադրել, որ սա պայմանավորված է պատերազմին մասնակցություն չունենալու հանգամանքով:

Ատենախոսական աշխատանքի **3.2՝ «Հոգեբանական գործոնների համահարաբերակցային վերլուծության արդյունքները»** ենթագլխում կատարվել է հետազոտության արդյունքների վերլուծություն համակարգչային Excell-2010 և SPSS-26 վիճակագրական ծրագրերի միջոցով: Իրականացվել է ընտրանքի նորմալ բաշխվածության ստուգում Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի: Վերլուծվել է փորձարարական խմբում հոգեբանական գործոնների միջև համահարաբերակցային կապերը: Փորձարարական խմբում $p \leq 0,01$ հավաստիության նշանակալի կոռելյացիոն դրական կապերը ցույց են տալիս, որ հուզական տեղեկացվածությունը (r=215) և ինքանմոտիվացիան (r=210) նպաստում են արդարացված ռիսկի գնալ լարված իրավիճակում: Սեփական հույզերի կառավարման (r=210) և ապրումակցման (r=332) կարողությունները նպաստում են զայրույթի ագրեսիայի նորմայի մակարդակում դրսևորմանը: Այսպիսով, մարտական

գործողություններին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի բավարար մակարդակը պայմանավորում է ագրեսիվության նորմայի մակարդակի դրսևորվածությունը և ռիսկի գնալու պատրաստակամությունը: Ասվածը ներկայացված է գծապատկերում.



Գծապատկեր 3. 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության և ռսիկի գնալու պատրաստակամության միջև համահարաբերակցային կապերը.

Փորձարարական խմբում բացահայտվել են նաև ամուր դրական կապեր նյարդահոգեկան կայունության, զայրույթի ագրեսիայի և ռիսկի գնալու պատրաստակամության միջև: Այս արդյունքները ցույց են տալիս, որ նյարդահոգեկան կայունության մակարդակով է պայմանավորված զայրույթի ագրեսիայի (r=212) և ռիսկի գնալու պատրաստակամության (r=210) դրսևորվածությունը: Անձնային տագնապայնության և թշնամանքի ագրեսիայի միջև ուժեղ կապը (r=208) ցույց է տալիս, որ մարտական գործողություններին մասնակից զինծառայողների ագրեսիվության տեսակի դրսևորվածությունը կախված է նրանց տագնապայնության աստիճանից:

Վերլուծվել է ստուգիչ խմբում հոգեբանական գործոնների միջև համահարաբերակցային կապերը: Ի տարբերություն փորձարարական խմբի՝ ստուգիչ խմբում p≤0,01 ամուր դրական կոռելյացիոն կապ է հաստատվել ապրումակցման և նյարդահոգեկան կայունության (r=212)

միջև: Տվյալ խմբում ապրումակցումը ցածր արտահայտվածություն ունի, ինչը հանգեցրել նյարդահոգեկան կայունության ցածր մակարդակի: Այսպես, մարտական գործողություններին մասնակցություն չունեցած զինծառայողները դժվարությամբ են աջակցում, կարեկցում համածառայակիցներին, ինչն էլ հանգեցնում է նյարդահոգեկան անկայունության, որը խոչընդոտում է մարտական խնդրի լիարժեք կատարմանը: Ասվածը ներկայացված է գծապատկերում.



Գծապատկեր 4. 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցություն չունեցած զինծառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության և ռսիկի գնալու պատրաստակամության միջև համահարաբերակցային կապերը.

Բացի այս ստուգիչ խմբում p≤0,01 ամուր դրական կոռելյացիոն կապեր են հաստատվել զայրույթի ագրեսիայի և իրավիճակային տագնապայնության (r=245) և անձնային տագնապայնության (r=360) միջև: Սա նշանակում է, որ մարտական գործողություններին մասնակցություն չունեցած զինծառայողների իրավիճակային տագնապայնության ցածր և անձնային տագնապայնության միջին արտահայտվածությունը նպաստել են զայրույթի ագրեսիայի նվազեցմանը:

Ատենախոսության վարկածը հաստատելու նպատակով ձևավորվել է լրացուցիչ փորձարարական խումբ, որտեղ ընդգրկվել են 2020 թ.

Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից վաշտի, դասակի, ջոկի, գումարտակի, զորամասի հրամանատարների, նույնանուն պատերազմում աչքի ընկած զինծառայողներ: Այստեղ համահարաբերակցային վերլուծության հավաստիության ցուցանիշները փոխվել են, քանի որ փորձարարական խմբում ընդգրկվել են 60 զինծառայող: Հոգեբանական գործոնների համահարաբերակցային կապեր են բացահայտվել (p≤0,01) հուզական տեղեկացվածության և ռիսկի գնալու պատրաստակամության (r=310) միջև: Սա նշանակում է, որ հուզական տեղեկացվածությունը թույլ է տվել արդարացված ռիսկի գնալ, որը հաստատում է միջին ցուցանիշների տվյալները: Միևնույն հավաստիության կապեր են հաստատվել ֆիզիկական ագրեսիայի (r=414), զայրույթի ագեսիայի (r=447), թշնամանքի ագրեսիայի (r=535) և իրավիճակային տագնապայնության միջև, ինչպես նաև զայրույթի ագրեսիայի (r=356), թշնամանքի ագրեսիայի (r=428) և անձնային տագնապայնության միջև: Սա նշանակում է, որ նորմայի մակարդակում ագրեսիվությունը նպաստում է տագնապայնության միջին արտահայտվածությանը: Քանի որ հետազոտական խմբում անձնային տագնապայնությունը միջին արտահայտվածություն ունի, իսկ ագրեսիվության բոլոր տեսակները նորմայի մակարդակում են, հետևաբար կարող ենք ասել, որ նշյալ խմբում տագնապայնությունը դրական նշանակություն ունի: P≤0,01 հավաստիության ամուր դրական կապ է բացահայտվել նյարդահոգեկան կայունության և ֆիզիկական ագրեսիայի (r=459), զայրույթի ագրեսիայի (r=391) և թշնամանքի ագրեսիայի (r=336), ինչպես նաև ռիսկի գնալու պատրաստակամության (r=414) միջև: Այս կապերը վկայում են այն մասին, որ ագրեսիայի տեսակները՝ ֆիզիկական, զայրույթի, թշնամանքի, վերբալ և ռիսկի գնալու պատրաստակամությունը սերտորեն կապված են նյարդահոգեկան կայունության հետ, այս կապերը հիմնավորում են միջին ցուցանիշները: Ստացված արդյունքներից կարելի է ենթադրել, որ մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հոգեբանական կայունությունը պայմանավորված է մարտի սթրես-գործոնների ազդեցությամբ: Այս ենթադրությունը հաստատելու համար անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել նաև 2022 թ. սեպտեմբերյան մարտական գործողություններին մասնակից զինծառայողների (ժամկետային, շարքային, ենթասպայական, կրտսեր և ավագ սպայական կազմ) մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները: Այստեղ համահարաբերակցային վերլուծության հավաստիության ցուցանիշները փոխվել են, քանի որ փորձարարական թիվը կազմել է 30: Պետք է նշել, որ այս խմբում իրականացվել է հուզական ինտելեկտի, տագնապայնության,

ագրեսիվության և սթրեսակայունության մակարդակների չափում: Առկա են p≤0,01 հավաստիության ամուր դրական կապեր հուզական տեղեկացվածության (r=561), սեփական հույզերի կառավարման (r=581) և սթրեսակայունության միջև: Այս կապերը նշանակում են, որ զինծառայողների համեմատաբար բարձր հուզական տեղեկացվածությունը, սեփական հույզերի կառավարումը թույլ է տվել նրանց մարտական իրադրությունում սթրեսակայուն լինել: Ստացված արդյունքները կարելի է պայմանավորել նախորդ պատերազմում համածառայակիցների մեծաթիվ կորուստների հետ, ինչը ստիպել է ավելի կայուն լինել հակառակորդին համարժեք հարված հասցնելու համար: Ուշագրավ է p≤0,01 հավաստիության ամուր դրական կապը սթրեսակայունության և վերբալ ագրեսիայի (r=513) միջև: Ի տարբերություն մյուս փորձարարական խմբերի, այս խմբում դրական կապ է հաստատվել վերբալ ագրեսիայի միջև, ինչը ցույց է տալիս, որ սթրեսակայուն անձնավորության վերբալ կամ խոսքային ագրեսիան նորմայի մակարդակում է գտնվում:

Կարելի է եզրակացնել, որ 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների, այդ թվում նույնանուն պատերազմում աչքի ընկած զինծառայողների, ինչպես նաև 2022 թ. սեպտեմբերյան մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հոգեբանական կայունությունը պայամանավորող գործոնները նորմայի մակարդակում են և կարող են մղել մարտական բարձր ակտիվության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հիմնախնդրի շուրջ կատարած տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. «Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների իմաստաբանական և ստուգաբանական մեկնաբանությունները, ռազմական ոլորտի մասնագետների դիտարկումները այս եզրույթների տարանջատման և ճիշտ կիրառման մասին հիմք են հանդիսանում առաջարկելու հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ գործածելի դարձնել «մարտական ակտիվությունը»՝ որպես առանձին հասկացություն, որը մարտի պայմաններում զինծառայողների ֆիզիկական, մասնագիտական և հոգեկան ռեսուրսները մոբիլիզացնելու և համապատասխան վարքագիծ

ցուցաբերելու կարողությունն է: Մարտական ակտիվության աստիճանը կապված է տվյալ պահին անձնավորության հոգեֆիզիոլոգիական վիճակի, մոտիվացիայի, պահանջմունքների, համոզմունքների և ցանկությունների, հուզակամային հատկությունների հետ:

2. Մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների ազդեցության աստիճանը կապված է կոնկրետ մարտական իրադրությունից, տվյալ իրավիճակում հայտնված մարտիկների հոգեվիճակից և այլ փոփոխական պարամետրերից, այսինքն՝ կրում է իրավիճակային բնույթ:

3. ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների մարտական ակտիվության աստիճանի վրա մեծ ազդեցություն ունեն մարտական պատրաստականությունը, անձնային որակները, հոգեֆիզիոլոգիական վիճակը, կառավարման համակարգի արդյունավետությունը, փոխվստահությունն ու փոխգործակցությունը: Ըստ այդմ՝ մարտական պատրաստման արդյունավետ կազմակերպմամբ հնարավոր է բարձրացնել անձնակազմի հոգեբանական և մասնագիտական պատրաստության մակարդակը:

4. 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի մակարդակն ուղիղ համեմատականով պայմանավորված է պատերազմի սթրես-գործոնների ազդեցությունից:

5. 44-օրյա պատերազմին մասնակցություն չունեցած զինծառայողների ագրեսիվության բարձր արտահայտվածությունը պայմանավորված է մարտական գործողություններին մասնակցություն չունենալու հանգամանքով:

6. Մարտական գործողություններին մասնակից և մասնակցություն չունեցած զինծառայողների հուզական տեղեկացվածության, սեփական հույզերի կառավարման, ինքնամոտիվացիայի, ապրումակցման և սթրեսակայունության, տագնապայնության, ագրեսիվության, նյարդահոգեկան կայունության, ռիսկի գնալու պատրաստակամության միջև կայուն կապերը թույլ են տալիս եզրակացնել, որ մարտի լարված պայմաններում մարտական բարձր ակտիվության ցուցաբերումը կախված է հուզական ինտելեկտի մակարդակից:

7. Մարտական, այդ թվում հոգեբանական պատրաստման նոր մոտեցումները հնարավորություն կտան զինվորական անձնակազմին մարտական գործողությունների պայմաններում ցուցաբերել մարտական բարձր ակտիվություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Բաղդասարյան Ս. Մ., Ռազմավարական առաջավարին բնորոշ անձնային հատկությունների ձևավորման հարցի շուրջ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, Երևան, 2020, №2 (104), էջ 17-25:

2. Բաղդասարյան Ս. Մ., Սպաների հուզական բանականության առանձահատտկությունների նախնական ուսումնասիրության արդյունքները, «Արդի հոգեբանություն» գիտական հանդես, Երևան, 2021, № 2 (9), էջ 73-79:

3. Բաղդասարյան Ս. Մ., Ժամկետային զինծառայողների հուզական ինտելեկտի, տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների համահարաբերակցային վերլուծության արդյունքները, «Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2022, № 1 (1), էջ 236-242:

4. Baghdasaryan S. M. Emotional intelligence of Servicmen as a factor of ensuring psychological stability. Регион и мир научно-аналитический журнал, Ереван, 2022, № 5 (XIII), С. 33-36.

5. Լոքյան Ա. Բ., Բաղդասարյան Ս. Մ., «Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների կիրառման առանձնահատկությունների և իմաստային տարբերակվածության շուրջ, «Գիտական Արցախ» պարբերական, Երևան, 2022, № 3 (14), էջ 173-183:

6. Լոքյան Ա. Բ., Բաղդասարյան Ս. Մ., ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող գործոններ. փորձագիտական գնահատում, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, Երևան, 2023, № 1 (115), էջ 105-118:

7. Բաղդասարյան Ս. Մ., Զինվորական անձնակազմին մարտական ակտիվության մղող հոգեբանական գործոնների հիմնախնդիրը՝ հոգեբանական գիտական գրականության մեջ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 2023, № 2, (ընդունված է տպագրության),

8. Բաղդասարյան Ս. Մ., 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի և ագրեսիվության համահարաբերակցային առանձնահատկությունները, Երևան, 2023, № 3 (18), էջ 132-142:

БАГДАСАРЯН СВЕТЛАНА МАРГАРОВНА

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩУЮ БОЕВУЮ АКТИВНОСТЬ ВОИНСКОГО ЛИЧНОГО СОСТАВА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- «Общая психология. Теория и история психологии. Психология личности».

Защита диссертации состоится 19 января 2024 года в 15^{00} часов на заседании специализированного совета по психологии 067 ВАК РА по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна 52 а, Ереван, Армения.

РЕЗЮМЕ

Актуальность темы: В последние годы в области психологических и военных наук наблюдается благотворный рост научного интереса к особенностям проявления психологических факторов, побуждающих к боевой активности воинского личного состава. Создание и развитие вооружения и военной техники, в том числе высокоточного оружия, автоматизированных систем управления войсками, новых способов и средств ведения войны привело к тому, что современные войны стали скоротечными и более динамичными, значительно сократилось время на принятие решений и выполнение боевых задач, привели к переосмыслению деятельности военнослужащих, необходимости разработки новых программ по боевой, в том числе психологической подготовке. Уровень подготовки военнослужащих, соответствующий требованиям современных войн, позволит использовать мобилизованные физические, умственные и психические ресурсы в напряженных условиях и действовать в соответствии с ситуацией. Сегодня, как никогда, в связи с 44-х дневной Арцахской войной 2020 г. и сентябрьскими боевыми действиями 2022 г. исследования психологических факторов, обусловливающих боевую активность воинского личного состава, крайне актуальны и буквально направлены на поддержание психологической стабильности в боевой обстановке, что позволяет расширить боевые возможности военнослужащего. Актуальность нашего исследования определяется теоретическими и практическими проблемами, которые ставятся перед современной психологией.

Объектом исследования является психологические факторы, обусловливающие боевую активность воинского личного состава.

Предметом исследования является особенности проявления психологических факторов, обусловливающих боевую активность воинского личного состава.

Цель исследования. Выявить психологические факторы, определяющие степень боевой активности воинского личного состава, которые могут способствовать или препятствовать успешному выполнению боевой задачи.

Гипотеза исследования. Считается, что степень боевой активности военнослужащего подвержена изменению, она прямо пропорционально обусловлена уровнем эмоционального интеллекта и проявлением агрессивности военнослужащего.

Задачи исследования.

1. Выявить психологические факторы, обусловливающие степень боевой активности военнослужащих.

2. Раскрыть взаимосвязанные особенности психологических факторов военнослужащих, участвовавших и не участвовавших в 44-х дневной Арцахской войне 2020 г.

3. Выявить особенности и семантическое различие в применении терминов «боевая активность» и «боеспособность».

4. Изучить подходы к факторам, обусловливающим боевую активность военнослужащих.

5. Изучить современные подходы к формированию психологической устойчивости воинского личного состава.

6. Разработать новую методологию, ориентированную на психологическую подготовку.

Научная новизна исследования.

- Было выявлено, что повышение уровня эмоционального интеллекта военнослужащих, участвовавших в 44-дневной войне, обусловлено непосредственным воздействием стрессовых факторов войны.
- Было выявлено, что Средняя степень агрессивности военнослужащих, участвовавших в 44-дневной войне, обусловлено непосредственным воздействием стрессовых факторов войны.
- Было выявлено, что высокий уровень агрессивности военнослужащих, не принимавших участия в боевых действиях, обусловлен тем, что они не участвовали в войне.

Теоретическое и практическое значимость исследования. Результаты исследования могут расширить теоретическое представления о психологических факторах, обусловливающих боевую активность военнослужащих Вооруженных Сил РА, расширить круг представлений об изменениях психологического состояния военнослужащих, послужив основой для организации мероприятий, направленных на психологическую подготовку. Результаты и выводы данной научно-исследовательской работы могут быть применены в программе боевой, в том числе психологической подготовки, а также определить направление организации психотерапевтической работы с военнослужащими.

Экспертиза исследования. Результаты исследования регулярно обсуждались на заседаниях кафедры психологии и политологии Академии государственного управления РА, а также на собраниях-совещаниях, организованных Министерством обороны РА**.**

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Общий объем работы составляет 145 страницы.

По теме диссертации опубликовано 8 статей.

BAGHDASARYAN SVETLANA MARGAR

PSYCHOLOGICAL FACTORS DETERMINING THE COMBAT ACTIVITY OF MILITARY PERSONNEL

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.01 - General psychology, theory and history of psychology, psychology of personality.

The defence of the dissertation will be held on January 19, 2023, at 15^{00} at the session of the Specialized Council 067 in Psychology of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52 a.

SUMMARY

The relevance of the topic. In recent years, in the fields of psychological and military sciences, there has been a beneficial increase in scientific interest in the specifics of the manifestation of psychological factors that drive military personnel to combat activity. The creation and development of weapons and military equipment, including high-precision weapons, automated troop control systems, new ways and means of warfare have led to the fact that modern wars have become fast and more dynamic, significantly reduced the time for decision-making and performance of combat tasks, which lead to a rethinking of the activities of servicemen, the need to develop a set of programs for combat, including psychological training. The level of training of servicemen corresponding to modern warfare will allow them to use mobilized physical, mental and psychic resources in tense conditions and behave in accordance with the situation.

Today, more than ever, in connection with the 2020 44-day Artsakh war and 2022 September hostilities, research of the psychological factors that condition the combat activity of military personnel is extremely relevant and literally aimed at maintaining psychological stability in a combat situation, which allows to expand the combat capabilities of the serviceman. The relevance of our research is determined by the theoretical and practical problems of modern psychology.

The object of the research is the psychological factors that condition the combat activity of military personnel.

The subject of the study is the peculiarities of manifestation of psychological factors that condition the combat activity of military personnel.

The aim of the study: Identify psychological factors that determine the degree of combat activity of military personnel, which can contribute to or hinder the successful fulfillment of the combat task.

The hypothesis of the reserach: It is believed that the degree of combat activity of a serviceman is subject to change, it is directly proportional to the level of emotional intelligence and manifestation of aggressiveness of a serviceman.

Research issues.

1. Identify psychological factors that determine the degree of servicemen's combat activity.

2. Reveal the interrelated peculiarities of psychological factors of the servicepersons who participated and did not participate in 2020 44-day Artsakh war.

3. Identify the peculiarities and semantic difference in the application of the terms “combat activity” and “combat capability”.

4. To study approaches to the factors that condition the combat activity of servicemen.

5. To study modern approaches to the formation of psychological stability of military personnel.

6. Develop a new methodology focused on psychological training

Scientific novelty of the reserach.

- It was found that the increase in emotional intelligence of servicemen who participated in the 44-day war was due to direct exposure to the stressors of war.
- It was found that the average degree of aggressiveness of servicemen who participated in the 44-day war was due to direct exposure to the stressors of war.
- It was found that the high level of aggression of non-combat soldiers was due to the fact that they did not participate in the war.

Theoretical and practical significance of the research.

The result and conclusions of the scientific-experimental research can expand the theoretical understanding of psychological factors that condition the combat activity of servicemen of the RA Armed Forces. The results can expand the range of ideas about changes in the psychological state of servicemen, serving as a basis for the organization of activities aimed at psychological training. The results and conclusions of this research work can be applied in the program of combat, including psychological training, as well as determine the direction of the organization of psychotherapeutic work with servicemen.

The expertice of the reserach. The study results were regularly discussed at meetings of the Department of Psychology and Political Science of the RA Academy of Public Administration, as well as during the meetings organized by the RA Ministry of Defense.

The structure of the thesis. The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, list of references and appendices. The total volume of the work is 145 pages.

8 articles have been published on the topic of the thesis.